ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

ՀՐԱՏԱՊ

ՑԵԿՈՒՅՑ

Երևանի «Քատիկ» երեխաների աջակցության կենտրոն 2023 թ. մարտի 29-ի այցի վերաբերյալ

Բովանդակություն

Բովանդակություն 1

Այցի վերաբերյալ 2

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 4

- Երեխաների մուտքը Կենտրոն 4
- Երեխաների կրթության և ժամանցի իրավունքը 5
- Երեխաների առողջության իրավունքը 6
- Երեխաների շրջանում վատ սովորություններ և ինքնավնասումներ 7
- Բռնությունից պաշտպանությունը 8
- Երեխաների տրանսինստիտուցիոնալացման կանխարգելումը 11
- Աշխատանքային մթնոլորտը 12
- Հղի դեռահաս աղջկա իրավունքները 14
- Հաղորդակցությունը 15
- Այցի ընթացքում արձանագրված դեպքեր 16

Հրատապ արձագանք ենթադրող առաջարկություններ և նախարարության մեկնաբանությունները 18

Հավելված 1 – Լուսանկար 31

Հավելված 2 - Նախարարության գրությունը 32

Հավելված 3 - Նախարարության ամբողջական տեղեկանքը 33

Այցի վերաբերյալ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խումբը (այսուհետ՝ Դիտորդական խումբ) գործում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թ. հոկտեմբերի 16-ի N 112-Ա/1 հրամանի համաձայն:

Դիտորդական խմբի անդամները 2023 թ. մարտի 29-ին (13:00-ից 16:00-ն) չհայտարարված այց են կատարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Երևանի «Ջատիկ» երեխաների աջակցության կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն):

Դիտորդական խմբի անդամներից Կենտրոն են այցելել հետևյալ ներկայացուցիչները՝

- Լիլիթ Գևորգյան, «Առողջապահության քաղաքականության և նորարարության կենտրոն» ՀԿ.
- Հայկ Մկրտչյան, անհատ անդամ.
- Մուշեղ Հովսեփյան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ.
- Քրիստինա Բաղդասարյան, «Կանանի» սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ:

Այցի նպատակն է եղել գնահատել Կենտրոնում երեխաների իրավունքների իրավիճակը և ներկայացնել դրանց լուծման համար անհրաժեշտ առաջարկություններ:

Այցը կատարելիս դիտորդական խմբի անդամները կիրառել են մշտադիտարկման տարբեր մեթոդների համադրություն:

Հարցազրույցի մեթոդի միջոցով տեղեկություններ են հավաքվել երեխաների և աշխատողների փորձի, վերաբերմունքի և վարքագծերի վերաբերյալ: Հարցազրույցները եղել են ոչ կառուցվածքային և դրանք իրականացվել են խառը ընտրանքով:

Լրացուցիչ տվյալները ստացվել են ուղղակի դիտարկման մեթոդով: Դիտորդական խմբի անդամներն իրական ժամանակում դիտարկել և գրանցել են երեխաների և աշխատողների վարքագիծը և այլ պայմաններ:

Ինչպես մյուս, այս դեպքում ևս Դիտորդական խումբն իր մշտադիտարկման ամբողջ ընթացքում առանցքում ունեցել է երեխայի իրավունքների սկզբունքները, այդ թվում՝ արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունքը, ֆիզիկական կամ հոգեբանական բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից պաշտպանությունը:

Հաշվի առնելով մշտադիտարկման այցի արդյունքում արձանագրված՝ երեխաների իրավունքների իրավիճակը և հրատապ արձագանքի անհրաժեշտությունը՝ տվյալներն առավելագույնս սեղմ ժամկետներում համադրվել, ընդհանրացվել և վերլուծվել են սույն զեկույցում:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

Երեխաների մուտքը Կենտրոն

Այցի ընթացքում արձանագրվել է, որ երեխաների՝ Կենտրոն ուղղորդումը համակարգված չէ և նրանք այդտեղ կարող են հայտնվել տարբեր եղանակներով: Չհամակարգված լինելու պատճառով բարձր է երեխաների իրավունքների սահմանափակման, այդ թվում՝ ապօրինի պահելու ռիսկը:

Դիտորդական խմբի ներկայացուցիչներն ականատես են եղել աղջիկների խմբի փոքրերի սենյակում նույն անկողնում պառկած (15:20-ի դրությամբ) երկու երեխաների: Երկուսի մազերն ամբողջությամբ սափրված էին (լուսանկարը՝ հավելված 1-ում): Երեխաները ընդունվել էին Կենտրոն այցի նախորդ երեկոյան: Ըստ արված հարցազրույցների՝ ոստիկանները փոխանցելիս հաղորդել են, որ երեխաներից մեկն աղջիկ է, մյուսը՝ տղա: Միայն լոգանքի ժամանակ էին աշխատողները պարզել, որ ընդունել են երկու տղայի: Պարզելուց հետո ևս նրանք շարունակել են մնալ աղջիկների սենյակում, քանի որ տղաների խմբում ազատ տեղ չի եղել:

Ըստ արված հարցազրույցներից մեկի՝ վերջերս ընդունվել է մի տղա, որը երեք օր է մնացել Կենտրոնում, և բերվել է մոր և Միասնական սոցիալական ծառայության աշխատողի (ենթակա է ստուգման) կողմից: Այդ երեխան նախկինում եղել է Կենտրոնում և զբաղվել է մետաղի գողությամբ, սակայն, ըստ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի (այսուհետ՝ տնօրեն), ի համեմատություն նախկինի, իր օրոք Կենտրոնում նման բաներով հեշտությամբ զբաղվել այլևս հնարավոր չէ:

Ավելին՝ զրույցների ընթացքում պարզվել է, որ երեխային մայրը բերել է Կենտրոն, քանի որ «էդ տղան մի երեխայի շալվար է իջացրել, ծնողը տեսել է: Սրան [Կենտրոն բերված տղային] որպեսզի փախցնեն, բերել են ստեղ»: Ընդունելու հիմքերը, ըստ հարզացրույցում հնչած տեղեկությունների, բավարար չեն եղել, բայց տղային ընդունել է:

Ըստ տեղեկությունների՝ երեխաները Կենտրոն մուտք գործելիս չեն ստանում բավարար և իրենց հասկանալի լեզվով տեղեկություններ Կենտրոնի վերաբերյալ, ինչը նվազեցնում է հետագա աշխատանքների արդյունավետությունը:

Կենտրոնում միաժամանակ շուրջօրյա խնամք ստացող երեխաների հնարավոր թիվը մեծացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ 25-ից դառնալով 50: Չնայած դրան՝ մահճակալային ֆոնդը չի փոխվել, այլ փոփոխություններ չեն եղել: Փոփոխությունը մտահոգել է աշխատակազմին, հաշվի առնելով, որ ոչ միայն չկան անհրաժեշտ ֆիզիկական պայմաններ, այնպես էլ

մարդկային ռեսուրսի տեսանկյունից հնարավոր չէ կազմակերպել այդ թվով երեխաների խնամքը Կենտրոնում: Դա են հավաստում նաև Դիտորդական խմբի դիտարկումները: Դիտարկման այցի ժամանակ Կենտրոնում, ըստ տնօրենի, խնամք էր ստանում 37 երեխա և նոր երեխաներ ընդունելու համար պայմաններ չկային:

Երեխաների կրթության և ժամանցի իրավունքը

Դիտորդական խմբի կողմից ստացվել են տեղեկություններ դպրոցներում երեխաների արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտման վերաբերյալ:

Գրեթե բոլոր երեխաները բարձրաձայնել են դպրոցում առկա խնդիրները, այդ թվում՝ համադասարանցիների հետ շփման, միջանձնային հարաբերություններում առկա լարվածության մասին:

Ըստ երեխաների՝ խնդիրները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ իրենք «Ջատիկ»-ի սան են: Երեխաները նշել են, որ ավելի լավ է համադասարանցիները տեղյակ լինեն, որ իրենք ՀՕՖ-ից են, քան «Ջատիկից»:

Ջրույցների համաձայն՝ համադասարանցիները վիրավորում են, ծաղրում, նվաստացնում իրենց, իսկ աղջիկներից մեկի հետ ընդհանրապես ընկերություն չեն անում և արհամարհում են վերջինիս.

«Ընկերներ չունեմ, ոչ-ոք ինձ հետ չի ուզում շփվել, ասում են՝ դու վատն ես: Ես հո իրենց չեմ պարտադրելու, որ շփվեն ինձ հետ: Չեն ուզում, թող չշփվեն: Ես մենակությանը սովոր եմ»:

Մեկ այլ աղջիկ նշել է, որ համադասարանցի տղաներից մեկը մշտապես իրեն վիրավորել է, անհանգստացրել: Կենտրոնի և դպրոցների աշխատողների հետ քննարկումները փոքրիշատե նվազեցնում են խնդիրները:

Հարցված աղջիկներից ոմանք լարված իրավիճակից ելք չեն տեսնում: Նրանց խոսքերով՝ մանկավարժները միայն ասում են արհամարհեք, բանի տեղ մի դրեք, չար երեխաներին, սակայն, ինչպես նշեցին աղջիկները, դրանից հարցը չի կարգավորվում:

Տնօրենը ևս իր խոսքում նշեց մանկավարժների կողմից երեխաների նկատմամբ բացասական տրամադրվածությունը: Մի դեպքում մանկավարժը տնօրենին հեռախոսազանգով ասել է, որ վաղը երեխան չգնա դպրոց, քանի որ «դասը խանգարում

է», ինքը չպետք է թողնի երեսուն հոգու, ընկնի մեկի հետևից: Մեկ դեպքում էլ ասվել է՝ «եկեք հավաքեք, տարեք»՝ նկատի ունենալով երեխաներից մեկին:

Դպրոցներից մեկում մանկավարժը երեխային նոր դասարանի հետ ծանոթացնելիս հարցրել է՝ «որտեղից ես, հայրդ, մայրդ..»: Երեխան դեպքից հետո հրաժարվել է գնալ դպրոց:

Ստացված տեղեկության համաձայն՝ դպրոցներից մեկում Կենտրոնի երկու երեխաներին նստեցնում են իրար կողքի:

Երեխաները, այդ թվում՝ տղաները, զրույցի ընթացքում հայտնել են, որ երեկոյան ժամանցն ապահովված չէ և կարևորել են իրենց զբաղվածությունը:

Հատկապես ավելի բարձր տարիքի տղաները նշել են, որ աղջիկների խմբից ունեն ընկերուհիներ, ում հետ չեն կարողանում շփվել, քանի որ դռները կողպվում են: Այս պայմաններում տղաները և աղջիկներն իրար հետ շփվում են պատշգամբից բղավելով զրուցելով:

Երեխաների առողջության իրավունքը

Կենտրոնում խախտվում է խնամք ստացող դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման իրավունքը: Դեռահասներն իրազեկ չեն սեռական հասունացման, սեռական և վերարտադրողական առողջությանը վերաբերող հարցերին, չունեն բավարար գիտելիքներ սեռավարակների կանխարգելման միջոցների մասին: Նրանք չեն ստանում մեկուսի և բարյացակամ խորհրդատվություն սեռական հասունացման, սեռական առողջության հարցերի վերաբերյալ:

Սեռական հասունացման և սեռական առողջության մասին երեխաների հետ զրույցներ ունենալու մասին հարցերին աշխատողների մի մասն արել են կրկնվող «իրենք մեզնից լավ գիտեն», իրենք ամեն ինչից լավատեղյակ են» արտահայտությունները: Հաճախ երեխաների, աշխատողների գնահատմամբ, բարձր իրազեկվածությունը (ինչը մեր դիտարկմամբ՝ այդպես չէ) մեղադրական հնչերանգով կապվում էր դեռահաս աղջկա հղիության հանգամանքին, որը, ըստ նրանց, «շատ վատ օրինակ էր»:

Աշխատողներից ոմանք ասել են, որ սեռական վարքագծի վերաբերյալ առանձնազրույցներ ունենում են բոլոր երեխաների հետ: Սակայն, ըստ իրենց նկարագրածի, զրույցները ոչ թե տեղեկատվական բնույթի էին, այլ միայն ներկայացվել է, թե ինչ վատ է և ինչ բացասական հետևանքներ կարող է ունենալ:

Հարցին՝ երեխաներն իրենց հետ քննարկում են սեռական առողջության վերաբերյալ հարցերը, մտահոգությունները, աշխատողները նշել են, որ խոսում են ոչ թե իրենց, այլ մյուս աշխատողների հետ:

Որոշ աղջիկներ բարձրացրել են հիգիենայի պարագաների սղության և ոչ պատշաճ որակի խնդիրը: Մասնավորապես՝ երեխաների և աշխատողների հետ զրույցներից պարզ է դարձել, որ դաշտանի օրերին միայն մեկ միջադիր են տալիս: Նշվել է, որ աղջիկներին մեկ սափրիչ են տրամադրում, որից բոլորը պետք է օգտվեն, ինչպես նաև զուգարանում թղթի պակասի խնդիրը:

Աղջիկները նշել են, որ շամպունը վատ որակի է, «շատ վատ հոտ ունի», և ստիպված օճառ են օգտագործում, ինչի պատճառով մազերը թեփոտվում է: Նշվել է նաև, որ երբ շամպունը վերջանում է, աշխատողները շատ են բարկանում և դժկամությամբ են նորը հատկացնում:

Դիտորդական խմբի անդամների՝ աշխատողներից մեկի հետ առանձնազրույցի ժամանակ աղջիկներից մեկն աշխատողից խնդրեց շամպուն՝ հավանաբար ենթադրելով, որ մեր ներկայությամբ մերժում չի ստանա:

Երեխաներից մեկը նշել է. «Եթե երեխաներին չվախեցնեն, ամեն մի երեխա՝ նույնիսկ ամենափոքրը, էնքան բան կարող է պատմել: Ոչ մի բան չեն տալիս, երեխա կա կոշիկ չունի, անգամ նորմալ շոր չունի»:

Երեխաների շրջանում վատ սովորություններ և ինքնավնասումներ

Դիտորդական խմբի կողմից արձանագրվել է, որ Կենտրոնում խնամք ստացող երեխաների շրջանում լայն տարածում ունեն վատ սովորությունները:

Մասնավորապես՝ Դիտորդական խմբի հետ զրույցներում ծխախոտի առկայությունը որոշ տղաներ նույնիսկ չէին թաքցնում, ոմանք շրջում էին ծխախոտի տուփը գրպանում: Տղաներից մեկը հայտնել է, որ էլեկտրոնային ծխախոտ է փորձել, դուրը չի եկել և հիմա սովորական ծխախոտ է օգտագործում:

Տնօրենը հայտնել է միայն մեկ տղայի հավանական ծխելու մասին: Ըստ նրա, ինքը զգացել է հոտը, և նրան ծխախոտ փոխանցում է տատը՝ տեսակցությունների ժամանակ. «Ասում եմ՝ ինչի, ասում է՝ առանց դրա ինքը չի կարողանում: Տանը գիտեն: Ասացի՝ չբերես: Բայց ոնց որ նկատում եմ, որ գաղտնի բերում է»: Այլ ծխախոտ օգտագործողների մասին տնօրենը տեղեկություններ չի հայտնել: Նա նաև նշել է, որ, իր կարծիքով,

տղաներից մեկը հնարավոր է թմրանյութ է օգտագործում, քանի որ, ըստ նրա, ունի «տարօրինակ պահվածք»: Նա այլ գործի շրջանակներում խնդրել է Ոստիկանությանը պարզել թմրանյութեր օգտագործելու հանգամանքը: Թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի կանխարգելմանը, հնարավոր պրակտիկաների դադարեցմանն ուղղված այլ գործողությունների մասին տեղեկություններ չեն ստացվել:

Տղաները Դիտորդական խմբի ներկայացուցչի հետ զրույցում հստակ նշել են մոտակա ռեստորանների, ժամանցի վայրերի և գարեջրատների ապրանքների գները: Նշել են, որ ճիշտ է կան սահմանափակումներ, սակայն երբ իրենց հարազատներն այցելության ընթացքում իրենց գումար են տալիս, կարողանում են դուրս գալ Կենտրոնի տարածքից և վերադառնալ «առանց չեպե բերելու»:

Աղջիկների շրջանում տարածված են ինքնավնասման կամ դրան նմանվող փորձերը: Դա հաստատվել է ինչպես աշխատողների, այնպես էլ երեխաների հետ զրույցներում: Դաստակին քերծվածքներ անելը, փոքր վնասվածքների դեպքում վիրակապելն աշխատողները դիտում են ուշադրություն գրավելու միջոց:

Երեխաների՝ ինքնավնասումների, ինքնասպանության փորձ անելու ցանկության մասին հայտնել են տարբեր աշխատողներ, ներառյալ՝ հղի դեռահաս աղջկա դեպքում: Նման փորձերի մասին աշխատողների նախադասությունները որոշ դեպքերում կիսատ են մնացել կամ արագ անցում է կատարվել այլ թեմաների: Օրինակ՝ «Ուզում ա ինքնասպա... ինքն էլ չգիտի ինչ ա ուզում»:

Երեխաները մանկավարժներին կամ հաստատության մասնագետներին չեն դիտարկում որպես մարդկանց, ովքեր առաջացած խնդիրներին լուծում կարող են տալ. «Օրը 24 ժամ կռիվ են անում տղաներն ու աղջիկները: Ստեղի մասնագետները հազիվ գան կոֆե խմեն, հետ գնան: Ոչ մեկի հետ չենք ուզում խոսել: Ստեղ սաղ երեխեքն էլ գիտեն, եթե խնդիր են ունենում, իրենց ոչ ոք չի օգնում: Ստեղ էն իրավիճակի են հասցնում երեխեքին, որ ուզում են ինքնասպան լինեն, իրենց վնասեն: Եթե չեն ուզում ինքնասպան լինել, հաստատությունից փախնում են՝ ընկնում քաղմաս»:

Բռնությունից պաշտպանությունը

Դիտորդական խումբն արձանագրել է, որ երեխաներին շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի բոլոր ձևերից պաշտպանելու ուղղությամբ քայլերը համակարգված և բավարար չեն:

Այցի ընթացքում տեղեկություններ են ստացվել ֆիզիկական և սեռական բռնության վերաբերյալ:

Մասնավորապես՝ հավելյալ ուսումնասիրության է ենթակա մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության աշխատողի ազատման միջնորդություն ներկայացնելու տնօրենի որոշումը: Տնօրենի հետ զրույցում որպես հիմնավորում նշվել է «երեխաների հետ վատ պահելը», իր պարտականությունների կատարման ժամանակ երեխաներից մեկի կողմից գողության իրականացումը: Մինչդեռ հնարավոր վատ վերաբերմունքի համար աշխատանքից ազատումը բավարար միջոց չէ իրավական տեսանկյունից և անհրաժեշտ է գնահատել՝ արդյոք տնօրենի կողմից ձեռնարկվել են այլ միջոցներ, այդ թվում՝ հաղորդում ներկայացնելը, և, եթե այո, ինչ ընթացք է ստացել այդ հաղորդումը:

Ի լրումն, աղջիկները տեղեկացրել են նախորդ պահակի (ենթադրաբար պահնորդի) կողմից իրենց ծեծելու մասին:

Որոշ աղջիկներ մտահոգություն են հայտնել հանգստի սենյակում առկա տեսախցիկի կապակցությամբ՝ հիմնավորելով, որ տեսախցիկը դիտում է պահակը (պահնորդը), իրենք կաշկանդված են զգում և չեն կարողանում հանգստի սենյակում ավելի ազատ հագուստով շրջել: Այդ պատճառով վնասել են տեսախցիկի լարերը՝ խափանելով տեսահսկման համակարգի աշխատանքը:

Տնօրենը նշել է, որ, իր կարծիքով, պետք է Կենտրոնում ունենալ «ոստիկանական անվտանգություն»: Որպես հիմնավորում նշել է, որ «երեխաները ոստիկանների հագուստից ձգվածություն են զգում»: Թեև պահնորդները ևս ունեն արտահագուստ, նա նշել է, որ «բայց բանի տեղ չեն դնում… Որ ասեմ վախենում են՝ չէ»:

Խիստ մտահոգիչ են տնօրենի պատկերացումները երեխաների խնամքի և դաստիարակության վերաբերյալ և երեխաների մոտ վախի մթնոլորտի ձևավորման միջոցով հարցեր կարգավորելը:

Որոշ աղջիկներ նշել են, որ կենտրոնում իրենց ապահով չեն զգում, բռնության են ենթարկվել (ենթարկվում) ոչ միայն պահակի (ենթադրաբար պահնորդի), այլ որոշ դայակների, բուժքրոջ, ինչպես նաև տղաների կողմից՝ առանձնացնելով երկու՝ ազդեցություն ունեցող տղաների: Վերջիններս, ըստ զրույցների, ֆիզիկական և հոգեբանական բռնություն են գործադրում ոչ միայն աղջիկների, այլ նաև տղաների, և հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ:

Աղջիկները Կենտրոնում իրար միջև առկա լարվածությունն ու կռիվները հիմնականում կապում էին զբաղված չլինելու՝ չափից շատ պարապ մնալու, նաև՝ հեռուստացույց դիտելու հետ: Հանգստի սենյակում առկա էր մեկ հեռուստացույց, սակայն աղջիկներն ունեն տարբեր հետաքրքրություններ: Հագեցած օր չունենալը որպես բռնության առաջացմանը նպաստող գործոն նշել են նաև աշխատողները:

Աղջիկներից մեկն իրավիճակը բնութագրել է հետևյալ կերպ. «Կռիվներ շատ են լինում, սովոր ենք արդեն: [...] Տղաներն էլ աղջիկներն էլ վիճաբանում են միմյանց հետ, շատ հաճախ հեռախոսի կամ հեռուստացույցի համար են կռվում: Վազում են, գոռգոռում, արթնացնում միմյանց: Հարգանք չկա այստեղ: Առավոտ վազում են, գոռում, չեն թողնում քնել, միմյանց վիրավորում են՝ պապա-մամա են հայհոյում, մազերից են քաշում: Մի անգամ նույնիսկ վեճերից մեկի ժամանակ ուզում էին մեկին պատշգամբից գցել»:

Երեխաներից մեկը ձեռքի կոտրվածք ուներ: Ըստ տնօրենի՝ ձեռքը վնասել է ընկնելու հետևանքով շաբաթ օրը (մարտի 25-ին): Այս մասին Ոստիականությունը տեղյակ է, սակայն Դիտորդական խումբը հարկ է համարում առանձնահատուկ ուշադրություն դարձնել Կենտրոնում վնասվածքների բոլոր դեպքերին անկախ առաջացման պատճառից՝ հաշվի առնելով բռնության տարածված մշակույթը երեխաների շրջանում:

Տղաների խմբում եղել են վնասվածքներ և կապտուկներ ունեցող երեխաներ, սակայն նրանք նշել են, որ իրենց վնասել են մտավոր խնդիրներ ունեցող կամ «ագրեսիվ» մյուս երեխաները: Ըստ նրանց՝ նման դեպքերում միջամտում է Կենտրոնի անվտանգության աշխատակիցը, որը «հաղթանդամ է» և կարողանում է տղաներին հաշտեցնել, «իրարից առանձնացնել»:

Դիտորդական խմբի ներկայացուցչի համար ակնհայտ է եղել հաշմանդամություն չունեցող տղաների կողմից արհամարական և ծաղրական վերաբերմունքը հաշմանդամություն, հատկապես մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ: Զրույցների ընթացքում պարբերաբար հնչել են «ինքը գիժ ա», «կտցրած ա», «շեղված ա», «իրան մի լսեք» արտահայտությունները:

Տղաներից մեկը նշել է, որ իր համար մեկ է, թե ով ում է ծեծում կամ հարվածում Կենտրոնում, ինքն իր «աջը քաշած ապրում է» և ցանկություն չունի այդ մասին տեղեկացնելու Կենտրոնի որևէ աշխատողի:

Տղաներից մեկի խոսքով՝ ավելի մեծ տարիքի տղաներից մեկը սեռական բռնության է ենթարկել ավելի փոքր տարիքի մտավոր խնդիր ունեցող երեխայի, ինչին ինքն ականատես չի եղել, պարզապես իրեն պատմել են: Վերջինս նաև հետաքրքրվել է, թե ինչ կարող է պատահել սեռական բռնությունից հետո, արդյոք այն կբերի՞ սեռափոխության, հոգեկան առողջության խնդիրների և այլն:

Անկախ տարիքային խմբից՝ տղաներն անձնական զրույցներում նշել են, որ որևէ մեկի հետ չեն կարող կիսվել բռնության դեպքերի մասին, քանի որ կնշանակի «գործ տվող են»: Այդ պատճառով կտրուկ նվազում է բռնությունից պաշտպանվելու համար

Կենտրոնի աշխատակազմի հետ աշխատելու հնարավորությունը և տղաները, իրենց խոսքերով, «մնացել էին իրենք իրենց հույսին»:

Երեխաների շրջանում կան իշխանություն ունեցողներ, որոնք կարողանում են իրենց կամքը թելադրել այլ երեխաների (օրինակ՝ Դիտորդական խումբը ներկա է եղել տղաներից մեկի կողմից այդ պահին մեկ այլ տղայի հանձնարարական տալուն և կատարմանը) և այդ մասին տեղյակ են նաև տնօրենը և աշխատողները: Զրույցներից մեկի ժամանակ դրան հաղորդվել է մանկական խաղին բնորոշ հատկանիշներ, սակայն նշվել է նաև «զինվորականի պես» զգալու հանգամանքը, ինչն անհանգստացնող է հատկապես բռնությունների կանխարգելման և դրա մասին ազդարարման տեսանկյունից:

Ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնության տեսակների, բռնությունից պաշտպանության մասին պատկերացումները տղաների խմբում ևս եղել են խիստ սահմանափակ և շատ ցածր մակարդակի:

Զրույցի ընթացքում երեխաներից ոմանք հայտնել են, որ մտավոր խնդիրներ ունեցող 2 տղաներ, ովքեր ցուցաբերել են առանձնացող վարք, օրինակ՝ որոշ «սեռական շարժումներ» են կատարել, մերկացել և այլն, անմիջապես տեղափոխվել են հոգեբուժական հիվանդանոց:

Երեխաներից մեկն այցի նախորդ օրը տեղափոխվել է հոգեբուժական հիվանդանոց, քանի որ «ասֆալտի վրա հանվում, խփում էր իրեն գետնին, գլուխը, մարմինը»: Տնօրենը նշել է նաև, որ երեխան պատռել է շորերը, մերկացել. «Շորերը ճղեց, էն աստիճան, որ մի հինգ շոր ճղեց վրան: Լրիվ տկլորվում է, կանգնում: Երեկ կանչեցինք, տարան: Էնքան ուժ ուներ, կանգնած մեքենան հրում էր, նենց ուժ էր ձեռք բերել»:

Երեխաների տրանսինստիտուցիոնալացման կանխարգելումը

Երեխաների հետ աշխատանքն արդյունավետ չէ, և զրույցներից պարզ է դառնում, որ նրանց հետ աշխատանքի նպատակը երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումը չէ, այլ կացության ապահովումը և վարքը կառավարելի դարձնելը:

Զրույցի ընթացքում տնօրենը նշել է. «Էս երեխեքի հետ ապարդյուն է: Էս պահին խոսեցիր, աշխատեցիր, քեզ թվում է՝ արդյունք ունեցար, մի քիչ հետո, կարող է մի օր, նորից նույնը: Չեմ հասկանում՝ ինչը: Սովոր չեն, էդ պահին ընդունում են... Գողությունը մտած է մեջները: Գումար աշխատելու քաղցրությունը տեսել են»:

Աշխատողների հետ որոշ երեխաների մասին զրույցներում երբեմն նշվել է, որ «իրենց վերջը Գավառն է [խմբ. մանկատունը]»:

Երեխաների հետ զրույցում մի քանիսը նշել են, որ Կենտրոն են եկել Հայ օգնության Ֆոնդի Երեխայի աջակցության կենտրոնից, ՍՕՍ մանկական գյուղերից և այլն: Նրանք դիտորդներից նաև հետաքրքրվել են՝ արդյոք գնում են նաև այդ կենտրոններ և երկուսը ցանկություն են հայտնել վերադառնալ այնտեղ:

Երեխաներից մեկը նշել է, որ ինքն առանձնացված է իր քրոջից, ով Մարի Իզմիրլյանի անվան մանկատանն է:

Երեխաների հետ աշխատանքները համակարգված չեն, մասնագետներից յուրաքանչյուրն աշխատում է իր սահմանած նպատակի ուղղությամբ և երբեմն Կենտրոնը չի վարում պրոակտիվ գործելակերպ, օրինակ՝ նվազեցնելու համար Կենտրոնում երեխաների գտնվելու ժամկետը: Ավելին որոշ երեխաների դեպքում կա ձևավորված համոզմունք, որ ծնողներին պետք է զրկել ծնողական իրավունքներից, սակայն այդ մասով որևէ գործընթաց կարող է և նախաձեռնված չլինել:

Աշխատանքային մթնոլորտը

Դիտորդական խմբի սահմանափակ ժամկետում դիտարկումները վկայում են, որ աշխատանքային մթնոլորտը Կենտրոնում լարված է: Վերջինս բացասական ազդեցություն է ունենում երեխաների խնամքի կազմակերպման վրա:

Թեև տնօրենն իր խոսքում նշել է, որ աշխատակազմում փոփոխություններ չի արել, «ոչ մեկին չի հանել, իր հետ մարդ չի բերել», բայց կան և՛ աշխատանքից ազատման դիմում գրածներ, և՛ ազատվելու ցանկություն ունեցողներ:

Այցի պահին առկա էր փոխտնօրենի ազատ հաստիք, որի հավակնորդ թեկնածուն տղամարդ էր, և տնօրենի կողմից դա նշվում էր որպես դրական հանգամանք: Զրույցներում ստացված տեղեկությունների համաձայն՝ թեկնածուն նախկինում աշխատել է իրավապահ համակարգում:

Որոշ աշխատողների և որոշում կայացնողների միջև հաղորդակցությունը խաթարված է և առկա են երկուստեղ մեղադրանքներ տարբեր հարցերի վերաբերյալ:

Տնօրենը նշել է, որ մաքրության հարցում խստապահանջ է, ինչն արժանանում է աշխատողների ընդդիմությանը: Նշել է սոցիալական մանկավարժների հետ կապված իր մտահոգությունները, որ նրանք չգիտեն «սոցիալական մանկավարժի աշխատանքը»

և իրականացնում են միայն դասպատրաստում: Նրանց հնարավոր ազատման մասին խոսելիս մի քանի անգամ նշել է, որ նրանք «հին» են, «հներից են», ինչի պատճառով չի կարողանում ազատել. «Հլը մի հատ փորձի, տեսեք ինչ խոսակցություն է գալիս»:

Աշխատողներից ոմանք նշել են վերապատրաստումների անհրաժեշտության մասին, ինչը վերահաստատում են նաև Դիտորդական խմբի դիտարկումները:

Դիտորդական խմբի կողմից արձանագրվել է երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների, տրավմայի վերաբերյալ տեղեկացված խնամքի (trauma-informed care), երեխաների զարգացման, հղի կամ սեռական հարաբերություններ ունեցող երեխաների հետ աշխատանքի, դրական վարքագծի խթանման, առողջության և անվտանգության, ներքին հաղորդակցության և թիմային աշխատանքի, կառավարման և վարչարարության թեմաներով վերապատրաստումների խիստ անհրաժեշտություն:

Աշխատողներից ոմանք ունեն ցածր մոտիվացվածություն, իրենց աշխատավարձը համարում են անհամեմատ ցածր իրենց կատարած աշխատանքի դիմաց: Որոշ աշխատողներ ֆիզիկական, հուզական առումով հյուծված են, որը երկարատև կամ չափից մեծ սթրեսի հետևանք է:

Աշխատողները հաճախ ունենում են հարցեր և աջակցության կարիք աշխատելու որոշ երեխաների հետ, սակայն չեն ստանում համապատասխան մեթոդական օգնություն և տեղյակ չեն՝ ինչպես կարող են ստանալ իրավունքների վրա հիմնված, հավաստի, ժամանակակից մոտեցումներին համապատասխանող ուղղորդում: Աշխատողների կողմից բարձրաձայնվել է սուպերվիզիայի անհրաժեշտությունը:

Աշխատողներից ոմանց խոսքն ունեցել է կարծրատիպային և բռնության մշակույթը վերարտադրող բնույթ՝ հաճախ տարբեր երևույթներ արդարացնելով երեխաների «շեղված» վարքով կամ առողջական խնդիրներով:

Երեխաների և ծնողների մասին խոսելիս աշխատակազմի հետ զրույցներում հնչել են տարբեր ոչ ընդունելի, կարծրատիպային, պիտակող, սեռով և հաշմանդամությամբ պայմանավորված խտրական արտահայտություններ, օրինակ՝ «փողոցային», «հիմար պահվածք», «մեջներից նորմալ»:

Տարածված է նաև երեխաներին վերաբերող տարբեր հարցերում առանց նվազագույն կարեկցանքի խոսելը և նույնիսկ նրանց մեղադրելը՝ անկախ փաստից, որ իրենք տվյալ իրավիճակում եղել են բռնության զոհը:

Հղի դեռահաս աղջկա իրավունքները

Այցի ընթացքում ուսումնասիրվել են նաև Կենտրոնում խնամք ստացող հղի աղջկա հղիությանն առնչվող մանրամասները:

Մասնավորապես՝ աղջկա մասին տնօրենի և աշխատողների հետ խոսակցությունների առանցքում եղել է նրա՝ Կենտրոնում մնալու անընդունելիությունը, նրան այլ տեղ տեղափոխելու նրանց ցանկությունը: Զրույցների ընթացքում երեխայի վերաբերյալ հնչել են իրար հակասող տեղեկություններ, այդ թվում՝ հղիության ժամկետը, պտղի հասունությունը, Կենտրոնից փախուստի դեպքերը:

Հղիության հանգամանքի մասին նշվել է, որ նա հղիացել է փախուստի ժամանակ (տանից կամ հատուկ կրթահամալիրից): Նշվել է, որ վերջինս սեքս ծառայություններ է տրամադրում, սակայն ոչ միշտ է սեռական հարաբերություններ ունենում գումարի դիմաց:

Կենտրոնից փախուստների վերաբերյալ տվյալները ևս հստակ չեն ներկայացվել: Մասնավորապես՝ զրույցներում նշվել է, որ վերջին փախուստը 2023 թ. փետրվարին էր, որից հետո ոստիկանները նրան հայտնաբերել են Արմավիրի մարզում: Մինչդեռ տնօրենն իր խոսքում հայտնել է հետևյալը. «Վերջին փախնելուց հետո մի անգամ էլ է փորձել: Չի ստացվել: Գնացել է, հետ է եկել: Դուրս է գալիս, չի ասում»: Աշխատողների հետ զրույցում հնչել է տեղեկություն, որ վերջին փախուստը եղել է մոտ տասն օր առաջ:

Հղիության պահպանման կամ հղիության հնարավոր ընդհատման մասին հարցին ի պատասխան տնօրենը և աշխատողները նշել են, որ «ասում են՝ պետք ա բերի»: Նշվել է, որ «իրավունք չկա», «պետք է բերի» և դա, ըստ հարցազրույցների, ասվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Երեխայի մայրը տեղյակ չէ աղջկա հղի լինելու հանգամանքի մասին և անհրաժեշտ է բազմակողմանի ուսումնասիրել, թե ում կողմից, ինչ եզրակացությունների հիման վրա են կայացվել դեռահասի վերարտադրողական առողջության մասին որոշումները:

Տվյալներ են ստացվել նաև, որ աղջիկը սկզբնական փուլում չի ցանկացել պահպանել հղիությունը, և նրա հետ աշխատանք են կատարել. «Էդ ընթացք փախնում էր, մենք մտածեցինք՝ հանկարծ չգնա, բան անի: Իրան կանտրոլի տակ ենք պահում: Իրա մտքին կա փախնելն անընդհատ: Ինքը հաճույք ա ստանում դրանից: Դուրս գա, մենակ դուրս գա»:

Նրա մասին խոսելիս աշխատակազմի կողմից նշվել է, որ ունի «մտավոր հետամնացություն», միևնույն ժամանակ նշվել է նաև, որ «ինքն էլ չգիտի ինչ ա ուզում, օրվա ժամի ազդեցության տակ: Բայց չի գիտակցում: Մտավոր չի, գիտակցում էլ ա էլի»:

Երեխաների հարաբերություններն աղջկա հետ բավականին լարված են: Նրան մեղադրում են, որ տնօրենն իր պատճառով պատժել է բոլորին՝ զրկելով իրենց համատեղ էքսկուրսիաների կամ այլ միջոցառումների մասնակցելու հնարավորությունից:

Աղջիկը, Դիտորդական խմբի դիտարկմամբ, գտնվում է ծանր հոգեվիճակում: Արժանանում է ծաղրանքի, վիրավորանքի: Շփվում է երկու աղջկա հետ ու նշում, որ իրեն հասկանում են միայն դայակները, տնօրենն ու հոգեբանը:

Հաղորդակցությունը

Այցի ընթացքում արձանագրվել է, որ երեխաների՝ այլ անձանց, այդ թվում՝ ծնողների հետ հաղորդակցությունը սահմանափակված է: Հեռախոսների տնօրինման, դրանց օգտագործման սահմանափակման, որպես գույք պահպանելու հարցը կարգավորված չէ և թողնված է անհատների որոշումներին:

Մասնավորապես, տղաների հեռախոսները հավաքվել են տնօրենի կողմից: Երեխաներին ասվել է, որ հեռախոսները հավաքել են ոստիկանները: Տնօրենը ցույց է տվել աշխատասենյակի սեղանի դարակում պահվող մեկ թաբլեթ և սմարթֆոններ: Թեև դրանք երեխաներն օգտագործել են առանց քարտերի, որպես սահմանափակման հիմնավորում նշվել է, որ միևնույն է կարողացել են օգտվել տարածքում առկա wifi-ից, մուտք գործել Ինստագրամ, Տիկտոկ (ոչ ուղղակի մեջբերում):

Հաշվի առնելով, որ հեռախոսները նվիրվել են վարչապետի տիկնոջ կողմից՝ երեխաների մոտ արդարացի հարց է առաջացել, թե ինչու են նվիրել, եթե չի կարելի օգտագործել:

Այցի ընթացքում տարբեր դերակատարների հետ զրույցներից պարզվել է, որ վերջին շրջանում երեխաների կապը ծնողների հետ ապահովվում է սոցիալական աշխատողների մոտ գտնվող հեռախոսի միջոցով, և նրանք էլ ներկա են լինում հեռախոսազրույցին:

Տեսակցությունների հարցը բավարար կարգավորված չէ, և առկա է երեխաների և ծնողների անձնական կյանքի միջամտության բարձր ռիսկ:

Ծնողների հետ տեսակցությունները կազմակերպվում են միայն աշխատանքային օրերին և ժամերին: Կա նաև շաբաթվա ընթացքում այցերի թվի սահմանափակում:

Ծնողների հետ հանդիպումները ևս իրականացվում են սոցիալական աշխատողների ներկայությամբ: Տեսակցությունների սենյակը գտնվում է տնօրենի աշխատասենյակի մոտ և, ըստ նրա, տեսակցություններն իրականացվում են նաև իր ներկայությամբ և վերահսկողությամբ:

Աշխատակազմը բավարար տեղեկացված չէ, թե ինչպես պետք է ապահովել երեխայի հաղորդակցությունը ծնողի հետ, երբ ծնողները, օրինակ, գտնվում են ամուսնալուծության փուլում են կամ անցնում քրեական գործով:

Զրույցներից պարզ է դարձել նաև, որ որոշ դեպքերում Կենտրոնի աշխատողները հասանելիություն են ունեցել երեխաների՝ ինտերնետի միջոցով նամակագրություններին: Կենտրոնի կողմից երեխաների նամակագրություններին ծանոթանալու կարգը և պայմանները, այդ թվում՝ այն դեպքերում, երբ երեխայի վերաբերյալ հիմնական որոշումները կայացնում են իրենց ծնողները, կարգավորված չէ:

Այցի ընթացքում արձանագրված դեպքեր

Այցի ժամանակ սենյակներից մեկի կողքով անցնելիս Դիտորդական խմբի անդամներն արձանագրել են, որ աշխատողները երեխաների հետ խոսել են բարձր ձայնով և ագրեսիվ: Մի դեպքում ձայնի տոնը կտրուկ փոխվել է Դիտորդական խմբի ներկայացուցիչներին տեսնելուց հետո:

Տնօրենը նշել է, որ երեխաների հետ ինքը շփվում է հավասարը հավասարի, բայց նաև հեռավորություն է պահում. «Ինձ տեսել են ջղայնացած»:

Միևնույն ժամանակ տնօրենի ուղեկցությամբ աղջիկների խումբ մուտք գործելիս Դիտորդական խմբի ներակայացուցիչն արձանագրել է շատ բարձր գոռգոռոցներ: Անծանոթ անձի մուտքը ևս չի փոխել իրավիճակը և երեխաները որոշ ժամանակ շարունակել են բղավել:

Դիտորդական խումբն այցից հետո տեղեկություն է ստացել նաև, որ այցի ընթացքում շենքում է գտնվել երեխաներից մեկի մայրը, որը եկել է երեխային տեսակցության: Նրան փակել են տեսակցությունների սենյակում, որպեսզի, ըստ ենթադրության, չհաղորդակցվի Դիտորդական խմբի անդամների հետ: Դուռը բացվել է Դիտորդական խմբի հեռանալուց հետո:

Տվյալ տեղեկությունները ենթակա են ստուգման իրավապահների կողմից, և իրականությանը համապատասխանելու դեպքում՝ իրավական գնահատականի ինչպես

կատարելու, այնպես էլ համապատասխան ցուցում (առկայության դեպքում) տալու համար:

Հրատապ արձագանք ենթադրող առաջարկություններ և նախարարության մեկնաբանությունները

Հաշվի առնելով զեկույցում տեղ գտած՝ բազմակողմանի արձագանք պահանջող խնդիրների թիվն ու բազմազանությունը՝ այս բաժնում ներկայացված են բացառապես հրատապություն ենթադրող առաջարկությունները, որոնք վերաբերում են երեխաների կյանքի և առողջության իրավունքին:

Յուրաքանչյուր առաջարկի ներքևում ներկայացնում ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեկնաբանություններով՝ առանց խմբագրումների (ներառյալ սրբագրումը): Ուղեկցող նամակը և ամբողջական փաթեթը կարող եք գտնել հավելված 2-ում և հավելված 3-ում:

Առաջարկություն 1. Ապահովել անհապաղ պաշտպանություն և աջակցություն Կենտրոնում սեռական, ֆիզիկական և հոգեբանական հնարավոր բռնության զոհ դարձած երեխաներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Կենտրոնում խնամք են ստանում և՛ հաշմանդամություն ունեցող երեխաներ, և՛ հնարավոր բռնության ենթարկված երեխաներ, և՛ հոգեբանական բռնության հնարավոր զոհ դարձած երեխաներ, ինչը համահունչ է Կենտրոնի կանոնադրական նպատակներին:

Ներկայացված մտահոգության առնչությամբ Աշխատանքային խմբի անդամները զրուցել են երեխաների հետ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, որոնք զրույցի ընթացքում հայտնել են մյուս սաների կողմից իրենց նկատմամբ բռնության բոլոր տեսակների բացակայության մասին:

Այնուամենայնիվ տեղեկացնում ենք նաև, որ բազմամասնագիտական խմբի անդամների կողմից, գնահատված կարիքի հիման, վրա տրամադրվում է աջակցություն, որի լավարկման ուղղությամբ աշխատանքային խմբի կողմից ՊՈԱԿ-ին տրվել են համապատասխան ցուցումներ, այդ թվում՝ երեխաների միջանձնային հարաբերություններում հնարավոր ռիսկերը կանխարգելելու նպատակով:

Առաջարկություն 2. Համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ բազմակողմանիորեն բացահայտելու երեխաների իրավունքների հնարավոր բոլոր խախտումները, այդ թվում՝ սեռական, ֆիզիկական և հոգեբանական բռնությունները:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

ՊՈԱԿ-ի աշխատակազմը, ըստ անհրաժեշտության, իրականացրել և շարունակում է համագործակցությունն իրավապահ մարմինների հետ: Աշխատանքային խմբի կողմից տրվել է անհրաժեշտ ցուցում՝ համապատասխան փաստաթղթավորումը բոլոր դեպքերի համար ապահովելու և առավելագույնս հետևողական լինելու վերաբերյալ:

Առաջարկություն 3. Համադրել տղաների խմբում վնասվածքներ և կապտուկներ ունեցող երեխաների տվյալները և իրավապահներին փոխանցված հաղորդումները: Անհամապատասխանությունների և չարձանագրված դեպքերի պարագայում կիրառել պատասխանատվության միջոցներ և նպաստել իրավական գնահատական տալուն:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Երեխաների հետ զրույցի ընթացքում առանձնացվել է վնասվածք ստանալու երկու դեպք, որից մեկի պարագայում երեխայի ձեռքը եղել է կոտրված (ըստ ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության՝ երեխան բակում խաղալիս է ընկել): Հիշյալ դեպքի մասին անմիջապես տեղեկացված է եղել նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որն աջակցել է երեխայի բուժհաստատությունից կենտրոն տեղափոխմանը և հրատապ բանավոր կերպով հանձնարարել է՝ դիմել ոստիկանություն:

Մյուս դեպքում երեխայի ձեռքին նկատվել է քերծվածք, որը երեխայի և մասնագետների խոսքով՝ եղել է մարզման հետևանք:

Այլ երեխաների մոտ կապտուկներ, վնասվածքներ չեն նկատվել:

Առաջարկություն 4. Բավարար լրջությամբ մոտենալ ինքնավնասման, ինքնասպանության փորձի կամ անհանգստացնող նշանների ցանկացած դեպքի: Ապահովել աշխատակազմի կրթությունն ինքնասպանությունների, ինքնավնասումների և դրանց փորձերի, կրկնությունների կանխարգելման, նպաստող գործոնների հայտնաբերման և վերացման ուղղությամբ: Մշակել և ներդնել համապատասխան

ընթացակարգ աշխատողների համար, այդ թվում՝ ինքնասպանությունների, ինքնավնասումների կամ դրանց փորձերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու ընթացակարգը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Դիտորդական խմբի զեկույցում նշված ինքնասպանության և ինքնավնասման փորձերի մասին կազմակերպվել է զրույց և՛ հոգեբանի, և՛ սոցիալական մանկավարժների հետ: Մասնագետները նշել են, որ ինքնասպանության փորձ ՊՈԱԿ-ում արձանագրվել է տարիներ առաջ: Այնուամենայնիվ, կարևորելով հարցի զգայունությունը, աշխատանքային խմբի կողմից կազմակերպվել է զրույց ինչպես երեխաների, այնպես էլ մասնագիտական խմբի (նաև դայակների) հետ, որի շրջանակում ընդգծվել է բազմամասնագիտական խմբի փոխգործելության և ռիսկային դեպքերի շուրջ ընդլայնված քննարկումների առավել հաճախ կազմակերպման կարևորությունը:

Առաջարկություն 5. Ուսումնասիրել նախկինում ինքնավնասումների, երեխաների շրջանում ինքնասպանության փորձերի կամ նման ցանկության բարձրաձայնման դեպքում Կենտրոնի կողմից ձեռնարկված քայլերը և ձեռնարկել պատասխանատվության միջոցներ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Ուսումնասիրությունն իրականացվել է ՊՈԱԿ-ի աշխատակազմի և երեխաների հետ հարցազրույցների միջոցով. այս նպատակով աշխատանքները կլինեն շարունակական, այդ թվում՝ համապատասխան դասընթացների, մասնագիտական կազմի առավել հաճախ հաղորդակից դարձնելու միջոցով:

Առաջարկություն 6. Հրատապության կարգով ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ մշակել սեռական և ֆիզիկական բռնությունների կանխարգելման, դրանց ազդարարման քաղաքականություններ և ներդնել արդյունավետ մեխանիզմներ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Այս ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են դեռևս 2022 թվականից. մշակվել

և շրջանառության մեջ է դրվել համապատասխան օրենսդրական կարգավորումները բովանդակող փաթեթ, իսկ մինչ դրա ընդունումը և հաջորդող ենթաօրենսդրական իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների ամրագրումը՝ Նախարարությունը 2022 թվականից նշված հարցի շրջանակում համագործակցում է ոլորտային կազմակերպության հետ.ներկայումս կազմակերպությունն աջակցում է առանձին դեպքերի վարման գործընթացին, միաժամանակ իրականացնում է բոլոր հաստատություններում հետազոտական աշխատանք, որի արդյունքների ամփոփմամբ կներդրվեն միջանկյալ միջոցներ:

Առաջարկություն 7. Կազմակերպել աշխատակազմի և կամավորների պարտադիր ուսուցում՝ ապահովելու բոլոր երեխաների (անկախ սեռից, սոցիալական ծագումից, ծննդից, հաշմանդամությունից) մարդու իրավունքների և արժանապատվության վրա հիմնված խնամքը Կենտրոնում:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Ինչպես 2022 թվականին, 2023 թվականին ևս իրականացվելու են մասնագետների լայնածավալ վերապատրաստումներ. արդեն իսկ պլանավորվել է ոլորտային ավելի քան 600 մասնագետի մասնակցությամբ վերապատրաստումների դասընթացը՝ ՀՀ ԱՍՀՆ ազգային ինստիտուտի և ՍՕՍ մանկական գյուղեր ՀԲՀ-ի համագործակցությամբ: Հարկ է նշել, որ նշված թեմաներն ընդգրկող վերապատրաստման դասընթացներ ինչպես այս, այնպես էլ մյուս ՊՈԱԿ-ների համար իրականացվել են, սակայն, աներկբա է, որ յուրաքանչյուր տարի կա անհրաժեշտություն դրանց շարունակականությունն ապահովելու:

Միայն 2022 թվականին կազմակերպել են վերապատրաստումներ՝ «Երեխաների իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը», «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման ընթացակարգերը», «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների գնահատման գործընթացը», «Խնամատարություն», «Յունգյան արխետիպերի վերլուծություն», «ՄԻԱՎ-ով ապրող և ԹՆՕ կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության դեմ հակազդում ՀՀ-ում», «Ֆեմինիստական և գենդերային զգայուն մոտեցումները սոցիալական աշխատանքում», «Աուտիզմ ունեցող երեխաների վարքի գործառույթների ներկայացում և գնահատում դիտարկման միջոցով», «Արտթերապևտիկ աշխատանք մանկական վախերի հետ», «Կիրառական Վարքային Թերապիա/ABA/», «Երեխայի հոգեբանական առանձնահատկությունների հետազոտում, մեթոդներ, և դժվարությունների

բացահայտում», «Ավազաթերապիա, զգայական խաղեր և տեխնիկաներ», «Մետաֆորիկ ասոցիատիվ քարտերի կիրառումը երեխաների հետ իրականացվող աշխատանքում», «Ձարգացնող ալբոմների դերը հոգեխոսքային զարգացման հապաղում ունեցող երեխաների հետ աշխատանքում», «Արդյունավետ ծնողավարություն և հայրություն», «Հոգեբանական գրոհները», «Աուտիստիկ երեխայի վարքային դրսևորումները: Նյարդահոգեբանական վերլուծություն», «Երեխաների և դեռահասների հոգեկան առողջությունը և զարգացման խանգարումները» թեմաներով՝ ընդգրկելով հաստատության ընդհանուր 46 մասնակիցների:

Առաջարկություն 8. Իրականացնել վերջին շրջանում Կենտրոն ընդունված երեխաների փաստաթղթային վերլուծություն՝ ստուգելով փաստաթղթերի համապատասխանությունն օրենսդրությանը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Ուսումնասիրվել են2022-2023 թթ ընթացքում Կենտրոն ընդունված երեխաների փաստաթղթերի փաթեթները: Եղել են շտկման ենթակա փաստաթղթեր. տրվել են դրանք լրացնելու հանձնարարականներ:

Առաջարկություն 9. Կարգավորել երեխաների ուղղորդումը և մուտքը Կենտրոն՝ բացառելու առանց բավարար հիմքերի կամ ապօրինի կերպով պահելու ռիսկերը:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը</u>

Կենտրոնի գործառույթը ճգնաժամային իրավիճակներում գտնվող երեխաներին անհրաժեշտ ծառայությունների մատուցումն է, և երեխաներին ապօրինի կերպով չի կարող ընդգրկել շահառուների շրջանում. վերջիններս հաստատություն են ուղղորդվում կամ համայնքի, կամ ոստիկանության կողմից: Այնուամենայնիվ, աշխատանքային խմբի կողմից որոշ դեպքերում արձանագրվել են երեխայի՝ կենտրոն ընդունվելուց հետո թերի փաստաթղթային փաթեթներ ունեցող գործեր, որոնք հընթացս կլրացվեն:

Առաջարկություն 10. Վերանայել Կենտրոնում շուրջօրյա խնամք ստացող երեխաների թիվը մեծանցելու՝ նախարարության որոշումը, ուսումնասիրել դրա հիմնավորվածությունը և որոշման արդեն եղած և կանխատեսվող ազդեցությունը խնամք ստացող երեխաների կյանքի որակի վրա:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական քաղաքականության շրջանակում առաջնային է համարվում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը՝ ճգնաժամային Կենտրոնը այս պարագայում աջակցող կառույց է՝ կարճաժամկետ խնամքի տրամադրման և դրան զուգահեռ ընտանիքի հետ երեխայի վերամիավորման նպատակով իրականացվող աշխատանքների տեսանկյունից: Կենտրոնում խնամք ստացող երեխաների թիվն ընդլայնվել է՝ հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանից և մարզերից տարվա ընթացքում դիմելիության բարձր ցուցանիշը, որն արդարացիորեն կապված է եղել երեխաների լավագույն շահի հետ՝ ընտանիքներին ավելի մոտ գտնվելու, հարուցված քրեական գործերի շրջանակում համապատասխան մարմինների հետ անխափան համագործակցությունն ապահովելու, առանձին դեպքում այլ ենթակառուցվածքների արագ հասանելիությունն ապահովելու նպատակով:

Առաջարկություն 11. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Երևանի քաղաքապետարանի և կրթության ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ վերացնել երեխաների կրթությանը խոչընդոտող բոլոր գործոնները, այդ թվում՝ ջանքեր գործադրել Կենտրոնի սաների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությանը հասնելու նպատակով և նպաստել խտրականության հնարավոր դեպքերին իրավական գնահատական տալուն:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է մեկ դեպք, երբ հանրակրթական դպրոցը խոչընդոտել է երեխայի մուտքը դպրոց, որի մասին ավելի վաղ բանավոր կերպով տեղեկացվել էր ԿԳՄՍ նախարարության գործընկերներին: Իսկ արդեն ապրիլի 5-ին տնօրենի Ժ/պ-ն Կենտրոնի հոգեբանի հետ այցելել է վերոնշյալ հանրակրթական դպրոց՝ տնօրինության հետ քննարկելու երեխայի՝ ուսումնական հաստատությունում գտնվելու ժամանակատվածում գրանցված խնդիրները, երեխայի՝ հանրակրթական դպրոց մուտքի արգելքին առնչվող հարցերը:

Միաժամանակ տեղեկացնում ենք նաև, որ 2022 թվականի տարեվերջին Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը հերթական նիստի ընթացքում ձևավորել է հանձնաժողովին կից աշխատանքային խումբ՝ շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող երեխաների կրթական իրավունքի լիարժեք իրացմանը խոչընդոտող հանգամանքները

վերհանելու, հանձնաժողովի քննարկման առարկա դարձնելու և համապատասխան գերատեսչության հետ համագործակցությամբ լուծումներ գտնելու ուղղությամբ: Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված է նաև ԿԳՄՍՆ ներկայացուցիչ:

Առաջարկություն 12. Ապահովել Կենտրոնի բոլոր աշխատողների՝ դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման իրավունքի վերաբերյալ իրազեկվածությունը, երաշխավորել սեռական հասունացման և սեռական առողջության վերաբերյալ անհատականացված աշխատանքը երեխաների հետ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

2023 թվականին նախատեսված դասընթացների շրջանակում արդեն իսկ ներառվել է վերոնշյալ թեման: Ասվածին զուգահեռ պետք է նշել, որ Նախարարությունը փոփոխել և արդեն իսկ ներքին շրջանառության է դրել «ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի 1324-Ն որոշման մեջ փոփոխություններ իրականացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որտեղ վերանայվել է թե՛ մասնագետների մասնագիտական կարողությունների պահանջին առնչվող, թե՛ հաստատության գործունեությանն առնչվող այլ չափորոշիչներ:

Առաջարկություն 13. Կենտրոնում ապահովել անհրաժեշտ քանակի և պատշաճ որակի հիգիենայի պարագաներ, այդ թվում՝ աղջիկներին տրամադրել անհրաժեշտ թվով միջադիրներ, բացառել մի քանի անձի կողմից միևնույն հիգիենայի պարագայի օգտագործումը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Ուսումնասիրության ընթացքում կատարվել է այց կազմակերպության պահեստ: Պահեստում առկա են եղել անհրաժեշտ քանակի մաքրիչ և հիգիենիկ միջոցներ: Պահեստից ապրանքների շարժը կատարվում է պահանջագրերի միջոցով, և ապրանքները պահեստից ելքագրվում է պահանջագրերի հիման վրա՝ ըստ անհրաժեշտ քանակի:

Կազմակերպությունում հիգիենայի պարագաները տրվում են անհատական՝ յուրաքանչյուր երեխային առանձին: Ամեն ամսվա վերջին օրը, ըստ կարիքի և պահանջի, պահանջագրով պահեստից գուրս է գրվում մաքրիչ և հիգիենիկ

պարագաներ, և ամսվա առաջին օրը տնտեսուհին դայակներին ապահովվում է անհրաժեշտ քանակի մաքրիչ և հիգիենիկ պարագաներով:

Կենտրոն նոր երեխա ընդունվելու դեպքում, ապահովվում են երեխային անհրաժեշտ հիգիենիկ պարագաներով և հագուստով: Այս մասին անհատական զրույցներում փաստել են նաև երեխաների անմիջական խնամք իրականացնող աշխատակիցները:

Առաջարկություն 14. Ձեռնարկել բավարար ջանքեր՝ հասնելու երեխաների, հատկապես տղաների, ծխախոտային արտադրանք, թմրամիջոցներ և (կամ) հոգեներգործուն նյութեր օգտագործելուց հրաժարվելուն՝ ներգրավելով կախվածությունների հարցերով մասնագիտացած բժիշկների, հոգեբանների:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Կենտրոնում աշխատանքային խմբի կողմից զրույց է տարվել 13-15 տարեկան տղաների հետ, նրանց խոսքով՝ ծխախոտ փորձել են, բայց պարբերաբար չենօգտագործում: Թմրանյութի օգտագործման ներկայումս հայտնաբերված և շարունակական դեպքերչեն արձանագրվել: Կենտրոնի մասնագետներին ևս մեկ անգամ տրվել է ցուցում, որ յուրաքանչյուրն իր մասով նշված խնդրի հետ կապված իրականացնի կանխարգելիչ միջոցներ և ըստ անհրաժեշտության՝ համագործակցի իրավապահ կառույցների հետ:

Առաջարկություն 15. Հրատապ կարգով կազմակերպել Կենտրոնի տնօրենի մրցույթի անցկացումը՝ երաշխավորելով մրցույթը հաղթահարած անձի պատկերացումների և մոտեցումների համապատասխանությունը մարդու իրավունքներին, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հետ աշխատանքի պետական քաղաքականությանը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Ինչպես մնացյալ, այնպես էլ տվյալ պարագայում՝ ՊՈԱԿ-ների տնօրենների թափուր հաստիքների լրացման գործընթացը գտնվում է նախարարության մշտական ուշադրության կենտրոնում:

Առաջարկություն 16. Ուսումնասիրել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամանակահատվածում երեխաների և աշխատողների իրավունքների հնարավոր խախտումները, պարզել այդ ուղղությամբ

ձեռնարկված գործողությունների համապատասխանությունը և, ըստ անհրաժեշտության, կիրառել պատասխանատվության միջոցներ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Աշխատանքային խմբի անդամներն առանձնազրույցներ են ունեցել և՛ Կենտրոնի տնօրենի, և՛ աշխատակիցների հետ, ապա նաև ամբողջ աշխատակազմի մասնակցությամբ: Հնչել են առաջարկներ և դիտարկումներ. աշխատակազմի փոխգործելիության արդյունքում կտրվի համապատասխան ընթացք՝ գերակա համարելով երեխայի լավագույն շահը:

Առաջարկություն 17. Ուսումնասիրել նախարարության՝ Կենտրոնի նկատմամբ մշտադիտարկման և գնահատման, վերահսկողության, մեթոդական աջակցության պատասխանատու պաշտոնատար անձանց, այդ թվում՝ քաղաքական պաշտոններ զբաղեցնողների գործողությունների համարժեքությունը և, համապատասխանաբար, կիրառել պատասխանատվության միջոցներ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Հարկ է նշել, որ մեթոդական աջակցության համար պատասխանատու ստորաբաժանումը բոլոր ստորաբաժանումների հետ մշատական հեռախոսակապի մեջ է, տնօրենների հետ հանդիպումներ են կազմակերպվում տարբեր ձևաչափով: Նշված կենտրոնին, մինչև ուսումնասիրության իրականացումը ևս, տրամադրվել է մի շարք ուղղորդումներ:

Առաջարկություն 18. Ուսումնասիրել մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության աշխատողի ազատման միջնորդություն ներկայացնելու տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի որոշումը, հիմնավորվածությունը, պարզելու՝ երեխաներին ծեծելու վերաբերյալ ստացված տեղեկության համապատասխանությունն իրականությանը, տնօրենի կողմից նկատված «վատ պահելու» դեպքից հետո երեխաների պաշտպանության ուղղությամբ իրականացված քայլերի համարժեքությունը, անհրաժեշտության դեպքում կիրառել պատասխանատվության միջոցներ և աջակցել իրավական գնահատական տալուն:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից

ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Ինչպես ցանակացած աշխատակցի, այնպես էլ Պահնորդական գործունեության իրականացումը կենտրոնի առաքելությանը համահունչ կազմակերպելու հարցը Տնօրենի Ժ/պ-ն քննարկել է ծառայությունը մատուցողի հետ.դիտարկվել է ծառայության մատուցման գործընթացում առավելագույնս երեխայակենտրոն աշխատանքի ապահովումը:

Առաջարկություն 19. Ձեռնարկել հրատապ միջոցներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող երեխաների՝ խտրականությունից պաշտպանության իրավունքը, անցկացնել դեպքերի մանրամասն ուսումնասիրություն, անդրադառնալով նաև դեպքերի շարունակական բնույթին, դրանց արձագանքմանը, կիրառել պատասխանատվության միջոցներ և աջակցել իրավական գնահատական տալուն:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Ինչպես արդեն իսկ նշվեց՝ Ներկայացված մտահոգության առնչությամբ Աշխատանքային խմբի անդամները զրուցել են երեխաների հետ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, որոնք զրույցի ընթացքում հայտնել են մյուս սաների կողմից իրենց նկատմամբ բռնության բոլոր տեսակների բացակայության մասին:

Այնուամենայնիվ տեղեկացնում ենք նաև, որ բազմամասնագիտական խմբի անդամների կողմից, գնահատված կարիքի հիման, վրա տրամադրվում է աջակցություն, որի լավարկման ուղղությամբ աշխատանքային խմբի կողմից ՊՈԱԿ-ին տրվել են համապատասխան ցուցումներ, այդ թվում՝ երեխաների միջանձնային հարաբերություններում հնարավոր ռիսկերը կանխարգելելու նպատակով:

Առաջարկություն 20. Ուսումնասիրել երեխաների շրջանում միմյանց նկատմամբ շարունակական բռնությունների խորքային պատճառները և իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով մասնագետների:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Փաստարկված տվյալներ առկա չեն:

Առաջարկություն 21. Ուսումնասիրել Դիտորդական խմբի ստացած տեղեկության համապատասխանությունը պատշգամբից երեխաներից մեկին գցելու փորձի կամ ցանկության վերաբերյալ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Փաստարկված տվյալներ առկա չեն:

Առաջարկություն 22. Վերացնել երեխաների շրջանում քրեական ենթամշակույթին բնորոշ տարրերը, այդ թվում՝ որոշ երեխաների՝ մյուսների նկատմամբ իշխանություն ունենալը, խնդիրների մասին բարձրաձայնելու դեպքում «գործ տվողի» պիտակավորումը, և ձևավորել խնդիրների ու անհանգստությունների մասին բարձրաձայնելը խրախուսող միջավայր ինչպես աշխատողների, այնպես էլ երեխաների մոտ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Երեխաների ձայնը լսելի դարձնելու իրավունքի իրացման ուղղությամբ արդեն իսկ ներդրված միջոցների ընդլայնումը գտնվում է նախարարության շարունակական ուշադրության տիրույթում: բացի այդ, 2022 թվականին ՄԻՊ գրասենյակին ԱՍՀՆ-ն առաջարկել է հաստատություններում աշխատակազմերի և երեխաների համար իրականացնել վերապատրաստման դասընթաներ, որի արդյունքում ներդրվելու է երեխաների առողջական խնդիրներին համապատասխան միջոցներ՝ ուղղված վերջիններիս ձայնը լելի դարձնելու սահմանադրական իրավունքի իրացմանը:

Առաջարկություն 23. Ուսումնասիրել երկու երեխաներին հոգեբուժարան տեղափոխելու իրավական հիմքերը և այդ աշխատանքների կազմակերպման ընթացքի համապատասխանությունն օրենսդրությանը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Երեխաների հոսպիտալացումն իրականացվել է շտապօգնության միջոցով:

Առաջարկություն 24. Ապահովել հղի դեռահաս աղջկա անվտանգ մայրությունը, այդ թվում՝ հղիության ընթացքում ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման բարձրորակ ծառայությունների հասանալիությունը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Ինչպես նշվել է նախորդիվ՝ համապատասխան մասնագիտացված կենտրոնը սկսել է ՊՈԱԿ-ի հետ համագործակցություն, և արդեն իսկ կայացել ենդեպքի շուրջ քննարկումներ, առաջնային միջոցների ձեռնարկում:

Առաջարկություն 25. Ուսումնասիրել հղի դեռահաս աղջկա վերաբերյալ նախկինում կայացված որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, այդ թվում՝ իր կարծիքը հաշվի առնելը, ծնողի իրազեկվածությունը: Համապատասխանաբար ձեռնարկել նաև միջոցներ՝ ճշտելու ստացված տեղեկությունները նախարարության կողմից հղիությունը չընդհատելու ցուցման վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով պատասխանատվության միջոցներ, աջակցելով իրավական գնահատական տալուն:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Աշխատանքային խումբը առանձնազրույց է ունեցել զեկույցում նշված հղի աղջկա հետ, ով 16 տարեկան է. ՊՈԱԿ է տեղափոխվել հղի կարգավիճակով: Աղջկա հետ իրականացվել և շարունակվում են իրականացվել կարիքահեն միջոցառումներ.նախարարության կողմից տրվել են համապատասխան ցուցումներ՝ հաշվի առնելով դեպքի բարձր ռիսկայնությունը՝ ոլորտային համապատասխան կառույցների հետ համալիր միջոցառումների ձեռնարկման նպատակով:

Առաջարկություն 26. Դադարեցնել Կենտրոնում երեխաների նկատմամբ պատժիչ դաստիարակության մեթոդների կիրառումը, կանխել պահնորդական ծառայությունը ոստիկանական ծառայությամբ փոխարինելու տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի ցանկությունը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Տնօրենի Ժ/պ-ն աշխատանքային խմբի հետ զրույցում հերքել է նման մտադրությունը:

Առաջարկություն 27. Վերացնել ծնողների հետ տեսակցության և հեռախոսային հաղորդակցության մտցված նոր սահմանափակումները և հարգել նրանց անձնական կյանքի իրավունքը: Նոր գործելակարգին տալ իրավական գնահատական:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Տեսակցությունները ներկայումս իրականացվում են անխոչընդոտ, այնուամենայնիվ, տնօրենին այս հարցում ևս մեկ անգամ տրվել են համապատասխան ցուցումներ՝ ուղղված երեխա-ծնող հարաբերությունների առավել սերտ ապահովմանը: Տեսակցությունները փաստագրվում են նաև գրանցամատյաններում, որտեղ նշվում է երեխայի, ծնողի, դեպքը վարող սոցիալական աշխատողի տվյալները:

Առաջարկություն 28. Ուսումնասիրել Դիտորդական խումբի այցի ժամանակ երեխաներից մեկի մորը սենյակում բանալիով փակելու տեղեկության համապատասխանությունը և ձեռնարկել դրանից բխող անհրաժեշտ գործողություններ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբի դիտարկումը

Հեռախոսազրույց է իրականացվել դիտորդական խմբի այցի ժամանակ հաստատություն այցելած ծնողի հետ: Վերջինս նշել է, որ մշտապես տեսակցում է երեխաներին և որևէ անգամ այդ գործընթացում խոչընդոտի չի բախվել: Ծնողը հերքել է նաև լուրն այն մասին, թե դիտորդական խմբի այցի ժամանակ սենյակի դուռը եղել է կողպված:

Առաջարկություն 29. Հրատապ զեկուցում տեղ գտած տեղեկությունները և առաջարկները մեկնաբանել բացառապես երեխայի լավագույն շահի լույսի ներքո: Բացառել աշխատողների և երեխաների նկատմամբ՝ տեղեկությունները Դիտորդական խմբին փոխանցելու հանգամանքով պայմանավորված ճնշումները:

Հավելված 1 – Լուսանկար



Հավելված 2 - Նախարարության գրությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« » 2023 թ. N

Ձեր՝ 31.03.2023 թիվ 23-02

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՒՇԵՂ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովսեփյան,

Ի պատասխան Ձեր դիմումի (մտից՝ 31.03.2023 թիվ Մ/12582-2023), Ձեզ եմ տրամադրում Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն 29.03.2023 թ.-ին հասարակական դիտորդական խմբի այցի վերաբերյալ հրատապ զեկույցի «Հրատապ արձագանք ենթադրող առաջարկություններ»-ի ուսումնասիրության տեղեկանքը:

Առդիր՝ 14 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՓՈԽԱՐԻՆՈՂ Վ. ՏԵՐ-ԲԱԼՅԱՆ

X

Կատարող՝ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչություն
Հեռ.՝ 010563692

ՀՀ, Երևան 0010, Կառավարական տուն 3, հեռ.՝ (+374 10) 520 830, www.mlsa.am, info@mlsa.am

Հավելված 3 - Նախարարության ամբողջական տեղեկանքը

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն 29.03.2023 թ.-ին հասարակականդիտորդական խմբի այցի վերաբերյալ հրատապ զեկույցի «Հրատապ արձագանք ենթադրող առաջարկություններ»-ի ուսումնասիրության

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութունը կարևորում է ԱՍՀ նախարարի հրամանով ստեղծված հասարակական դիտորդական խմբի կողմից նախարարության ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ներում մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, հաստատություններում խնամք և դաստիարակություն ստացող երեխաների, խնամվող տարեցների իրավունքների անխոչընդոտ իրացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացումը: Հնարավոր խնդիրները կանխարգելելուն, դրանք քննարկելուն և վերհանելուն են ուղղված այս խմբի հետ նախարարության կողմից համագործակցության ջանքերը:

Այդ նպատակով 2023 ապրիլի 5–ին ՊՈԱԿ-ներում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խմբի անդամների հետ հանդիպում է ունեցել նախարար Ն. Մկրտչյանը, մարտի 2-ին դիտորդական խմբի անդամներին ընդունել է նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը:

Այնուամենայնիվ, տարընկալումներից խուսափելու նպատակով, հարկ ենք համարում ընդգծել, որ դիտորդական խումբն ունի մշտադիտարկման գործառույթ և խմբի կողմից ներկայացվող զեկույցներում կարող են տեղ գտնել դեպքերի, մասնավոր զրույցների նկարագրություններ, որոնք փաստագրված չեն, կարող են հիմնված լինել սուբյեկտիվ կարծիքների, մասնավոր ընկալումների վրա:

Ինչ վերաբերում է Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն 29.03.2023 թ.-ին հասարակական դիտորդական խմբի այցի վերաբերյալ հրատապ զեկույցի «Հրատապ արձագանք ենթադրող առաջարկություններ»-ի ուսումնասիրությանը, հարկ ենք համարում տեղեկացնել, որ նախարարությունում ձևավորվել է նշված զեկույցի ուսումնասիրությունն իրականացնող աշխատանքային խումբ՝ նախարարության ամփոփ

վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման, հավասարհնարավորությունների ապահովման վարչությունների աշխատակիցների և նախարարության ԿՍԱԳՀ խորհրդականի ներգրավմամբ:

Ստորև ներկայացվում են ուսումնասիրության արդյունքները՝ ըստ «**Հրատապ արձագանք ենթադրող առաջարկությունների»** ենթակետերի.

● Ապահովել անհապաղ պաշտպանություն և աջակցություն Կենտրոնում սեռական, ֆիզիկական և հոգեբանական հնարավոր բռնության զոհ դարձած երեխաներին, այդ թվում՝հաշմանդամություն ունեցող երեխաներին:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Կենտրոնում խնամք են ստանում և՛ հաշմանդամություն ունեցող երեխաներ, և՛ հնարավոր բռնության ենթարկված երեխաներ, և՛ հոգեբանական բռնության հնարավոր զոհ դարձած երեխաներ, ինչը համահունչ է Կենտրոնի կանոնադրական նպատակներին:

Ներկայացված մտահոգության առնչությամբ Աշխատանքային խմբի անդամները զրուցել են երեխաների հետ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, որոնք զրույցի ընթացքում հայտնել են մյուս սաների կողմից իրենց նկատմամբ բռնության բոլոր տեսակների բացակայության մասին:

Այնուամենայնիվ տեղեկացնում ենք նաև, որ բազմամասնագիտական խմբի անդամների կողմից, գնահատված կարիքի հիման, վրա տրամադրվում է աջակցություն, որի լավարկման ուղղությամբ աշխատանքային խմբի կողմից ՊՈԱԿ-ին տրվել են համապատասխան ցուցումներ, այդ թվում՝ երեխաների միջանձնային հարաբերություններում հնարավոր ռիսկերը կանխարգելելու նպատակով:

● Համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ բազմակողմանիորեն բացահայտելուերեխաների իրավունքների հնարավոր բոլոր խախտումները, այդ թվում՝ սեռական, ֆիզիկական ևհոգեբանական բռնությունները:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> – ՊՈԱԿ-ի աշխատակազմը, ըստ անհրաժեշտության, իրականացրել և շարունակում է համագործակցությունն իրավապահ

մարմինների հետ: Աշխատանքային խմբի կողմից տրվել է անհրաժեշտ ցուցում՝ համապատասխան փաստաթղթավորումը բոլոր դեպքերի համար ապահովելու և առավելագույնս հետևողական լինելու վերաբերյալ:

● Համադրել տղաների խմբում վնասվածքներ և կապտուկներ ունեցող երեխաներիտվյալները և իրավապահներին փոխանցված հաղորդումները: Անհամապատասխանությունների և չարձանագրված դեպքերի պարագայում կիրառել պատասխանատվության միջոցներ և նպաստելիրավական գնահատական տալուն:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> – Երեխաների հետ զրույցի ընթացքում առանձնացվել է վնասվածք ստանալու երկու դեպք, որից մեկի պարագայում երեխայի ձեռքը եղել է կոտրված (ըստ ՊՈԱԿ-ից ստացված տեղեկատվության՝ երեխան բակում խաղալիս է ընկել): Հիշյալ դեպքի մասին անմիջապես տեղեկացված է եղել նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որն աջակցել է երեխայի բուժհաստատությունից կենտրոն տեղափոխմանը և հրատապ բանավոր կերպով հանձնարարել է՝ դիմել ոստիկանություն:

Մյուս դեպքում երեխայի ձեռքին նկատվել է քերծվածք, որը երեխայի և մասնագետների խոսքով՝ եղել է մարզման հետևանք:

Այլ երեխաների մոտ կապտուկներ, վնասվածքներ չեն նկատվել:

● Բավարար լրջությամբ մոտենալ ինքնավնասման, ինքնասպանության փորձի կամանհանգստացնող նշանների ցանկացած դեպքի: Ապահովել աշխատակազմի կրթությունինքնասպանությունների, ինքնավնասումների և դրանց փորձերի, կրկնությունների կանխարգելման,նպաստող գործոնների հայտնաբերման և վերացման ուղղությամբ: Մշակել և ներդնելիամապատասխան ընթացակարգ աշխատողների համար, այդ թվում՝ ինքնասպանությունների,ինքնավնասումների կամ դրանց փորձերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու ընթացակարգը:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Դիտորդական խմբի զեկույցում նշված ինքնասպանության և ինքնավնասման փորձերի մասին կազմակերպվել է զրույց և՛ հոգեբանի, և՛ սոցիալական մանկավարժների հետ: Մասնագետները նշել են, որ

ինքնասպանության փորձ ՊՈԱԿ-ում արձանագրվել է տարիներ առաջ:Այնուամենայնիվ, կարևորելով հարցի զգայունությունը, աշխատանքային խմբի կողմից կազմակերպվել է զրույց ինչպես երեխաների, այնպես էլ մասնագիտական խմբի (նաև դայակների) հետ, որի շրջանակում ընդգծվել է բազմամասնագիտական խմբի փոխգործելության և ռիսկային դեպքերի շուրջ ընդլայնված քննարկումների առավել հաճախ կազմակերպման կարևորությունը:

● Ուսումնասիրել նախկինում ինքնավնասումների, երեխաների շրջանումինքնասպանության փորձերի կամ նման ցանկության բարձրաձայնման դեպքում Կենտրոնի կողմիցձեռնարկված քայլերը և ձեռնարկել պատասխանատվության միջոցներ:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Ուսումնասիրությունն իրականացվել է ՊՈԱԿ-ի աշխատակազմի և երեխաների հետ հարցազրույցների միջոցով. այս նպատակով աշխատանքները կլինեն շարունակական, այդ թվում՝ համապատասխան դասընթացների, մասնագիտական կազմի առավել հաճախ հաղորդակից դարձնելու միջոցով:

● Հրատապության կարգով ոլորտի հասարակական կազմակերպությունների հետհամագործակցությամբ մշակել սեռական և ֆիզիկական բռնությունների կանխարգելման, դրանցազդարարման քաղաքականություններ և ներդնել արդյունավետ մեխանիզմներ:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Այս ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են դեռևս 2022 թվականից. մշակվել և շրջանառության մեջ է դրվել համապատասխան օրենսդրական կարգավորումները բովանդակող փաթեթ, իսկ մինչ դրա ընդունումը և հաջորդող ենթաօրենսդրական իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների ամրագրումը՝ Նախարարությունը 2022 թվականից նշված հարցի շրջանակում համագործակցում է ոլորտային կազմակերպության հետ.ներկայումս կազմակերպությունն աջակցում է առանձին դեպքերի վարման գործընթացին, միաժամանակ իրականացնում է բոլոր հաստատություններում հետազոտական աշխատանք, որի արդյունքների ամփոփմամբ կներդրվեն միջանկյալ միջոցներ:

● Կազմակերպել աշխատակազմի և կամավորների պարտադիր ուսուցում՝ ապահովելուբոլոր երեխաների (անկախ սեռից, սոցիալական ծագումից, ծննդից, հաշմանդամությունից) մարդուիրավունքների և արժանապատվության վրա հիմնված խնամքը Կենտրոնում:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> – Ինչպես 2022 թվականին, 2023 թվականին ևս իրականացվելու են մասնագետների լայնածավալ վերապատրաստումներ. արդեն իսկ պլանավորվել է ոլորտային ավելի քան 600 մասնագետի մասնակցությամբ վերապատրաստումների դասընթացը՝ ՀՀ ԱՍՀՆ ազգային ինստիտուտի և ՍՕՍ մանկական գյուղեր ՀԲՀ-ի համագործակցությամբ: Հարկ է նշել, որ նշված թեմաներն ընդգրկող վերապատրաստման դասընթացներ ինչպես այս, այնպես էլ մյուս ՊՈԱԿ-ների համար իրականացվել են, սակայն, աներկբա է, որ յուրաքանչյուր տարի կա անհրաժեշտություն դրանց շարունակականությունն ապահովելու:

Միայն 2022 թվականին կազմակերպել են վերապատրաստումներ՝ «Երեխաների իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը», «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման ընթացակարգերը», «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների գնահատման գործընթացը», «Խնամատարություն», «Յունգյան արխետիպերի վերլուծություն», «ՄԻԱՎ-ով ապրող և ԹՆՕ կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության դեմ հակազդում ՀՀ-ում», «Ֆեմինիստական և գենդերային զգայուն մոտեցումները սոցիալական աշխատանքում», «Աուտիզմ ունեցող երեխաների վարքի գործառույթների ներկայացում և գնահատում դիտարկման միջոցով», «Արտթերապևտիկ աշխատանք մանկական վախերի հետ», «Կիրառական Վարքային Թերապիա/ABA/», «Երեխայի հոգեբանական առանձնահատկությունների հետազոտում, մեթոդներ, և դժվարությունների բացահայտում», «Ավազաթերապիա, զգայական խաղեր և տեխնիկաներ», «Մետաֆորիկ ասոցիատիվ քարտերի կիրառումը երեխաների հետ իրականացվող աշխատանքում», «Զարգացնող ալբոմների դերը հոգեխոսքային զարգացման հապաղում ունեցող երեխաների հետ աշխատանքում», «Արդյունավետ ծնողավարություն և հայրություն», «Հոգեբանական գրոհները», «Աուտիստիկ երեխայի վարքային դրսևորումները: Նյարդահոգեբանական վերլուծություն», «Երեխաների և դեռահասների հոգեկան առողջությունը և զարգացման խանգարումները» թեմաներով՝ ընդգրկելով հաստատության ընդհանուր 46 մասնակիցների:

● Իրականացնել վերջին շրջանում Կենտրոն ընդունված երեխաների փաստաթղթայինվերլուծություն՝ ստուգելով փաստաթղթերի համապատասխանությունն օրենսդրությանը:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> – Ուսումնասիրվել են2022-2023 թթ ընթացքում Կենտրոն ընդունված երեխաների փաստաթղթերի փաթեթները: Եղել են շտկման ենթակա փաստաթղթեր. տրվել են դրանք լրացնելու հանձնարարականներ:

● Կարգավորել երեխաների ուղղորդումը և մուտքը Կենտրոն՝ բացառելու առանցբավարար հիմքերի կամ ապօրինի կերպով պահելու ռիսկերը:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> – Կենտրոնի գործառույթը ճգնաժամային իրավիճակներում գտնվող երեխաներին անհրաժեշտ ծառայությունների մատուցումն է, և երեխաներին ապօրինի կերպով չի կարող ընդգրկել շահառուների շրջանում. վերջիններս հաստատություն են ուղղորդվում կամ համայնքի, կամ ոստիկանության կողմից: Այնուամենայնիվ, աշխատանքային խմբի կողմից որոշ դեպքերում արձանագրվել են երեխայի՝ կենտրոն ընդունվելուց հետո թերի փաստաթղթային փաթեթներ ունեցող գործեր, որոնք հընթացս կլրացվեն:

● Վերանայել Կենտրոնում շուրջօրյա խնամք ստացող երեխաների թիվը մեծանցելու՝նախարարության որոշումը, ուսումնասիրել դրա հիմնավորվածությունը և որոշման արդեն եղած ակնկախատեսվող ազդեցությունը խնամք ստացող երեխաների կյանքի որակի վրա:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> – Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական քաղաքականության շրջանակում առաջնային է համարվում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը՝ ճգնաժամային Կենտրոնը այս պարագայում աջակցող կառույց է՝ կարճաժամկետ խնամքի տրամադրման և դրան զուգահեռ ընտանիքի հետ երեխայի վերամիավորման նպատակով իրականացվող աշխատանքների տեսանկյունից: Կենտրոնում խնամք ստացող երեխաների թիվն ընդլայնվել է՝ հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանից և մարզերից տարվա

ընթացքում դիմելիության բարձր ցուցանիշը, որն արդարացիորեն կապված է եղել երեխաների լավագույն շահի հետ՝ ընտանիքներին ավելի մոտ գտնվելու, հարուցված քրեական գործերի շրջանակում համապատասխան մարմինների հետ անխափան համագործակցությունն ապահովելու, առանձին դեպքում այլ ենթակառուցվածքների արագ հասանելիությունն ապահովելու նպատակով:

● ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Երևանիքաղաքապետարանի և կրթության ոլորտի հասարակական կազմակերպությունների հետհամագործակցությամբ վերացնել երեխաների կրթությանը խոչընդոտող բոլոր գործոնները, այդ թվում՝ջանքեր գործադրել Կենտրոնի սաների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությանը հասնելունպատակով և նպաստել խտրականության հնարավոր դեպքերին իրավական գնահատական տալուն:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> – Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է մեկ դեպք, երբ հանրակրթական դպրոցը խոչընդոտել է երեխայի մուտքը դպրոց, որի մասին ավելի վաղ բանավոր կերպով տեղեկացվել էր ԿԳՄՍ նախարարության գործընկերներին: Իսկ արդեն ապրիլի 5-ին տնօրենի ժ/պ-ն Կենտրոնի հոգեբանի հետ այցելել է վերոնշյալ հանրակրթական դպրոց՝ տնօրինության հետ քննարկելու երեխայի՝ ուսումնական հաստատությունում գտնվելու ժամանակատվածում գրանցված խնդիրները, երեխայի՝ հանրակրթական դպրոց մուտքի արգելքին առնչվող հարցերը:

Միաժամանակ տեղեկացնում ենք նաև, որ 2022 թվականի տարեվերջին Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը հերթական նիստի ընթացքում ձևավորել է հանձնաժողովին կից աշխատանքային խումբ՝ շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող երեխաների կրթական իրավունքի լիարժեք իրացմանը խոչընդոտող հանգամանքները վերհանելու, հանձնաժողովի քննարկման առարկա դարձնելու և համապատասխան գերատեսչության հետ համագործակցությամբ լուծումներ գտնելու ուղղությամբ: Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված է նաև ԿԳՄՍՆ ներկայացուցիչ:

● Ապահովել Կենտրոնի բոլոր աշխատողների՝ դեռահասների սեռական ևվերարտադրողական առողջության պահպանման իրավունքի վերաբերյալ

իրազեկվածությունը,երաշխավորել սեռական հասունացման և սեռական առողջության վերաբերյալ անհատականացվածաշխատանքը երեխաների հետ:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - 2023 թվականին նախատեսված դասընթացների շրջանակում արդեն իսկ ներառվել է վերոնշյալ թեման: Ասվածին զուգահեռ պետք է նշել, որ Նախարարությունը փոփոխել և արդեն իսկ ներքին շրջանառության է դրել «ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի 1324-Ն որոշման մեջ փոփոխություններ իրականացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որտեղ վերանայվել է թե՛ մասնագետների մասնագիտական կարողությունների պահանջին առնչվող, թե՛ հաստատության գործունեությանն առնչվող այլ չափորոշիչներ:

- Կենտրոնում ապահովել անհրաժեշտ քանակի և պատշաճ որակի հիգիենայի պարագաներ, այդ թվում՝ աղջիկներին տրամադրել անհրաժեշտ թվով միջադիրներ, բացառել միքանի անձի կողմից միևնույն հիգիենայի պարագայի օգտագործումը:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Ուսումնասիրության ընթացքում կատարվել է այց կազմակերպության պահեստ: Պահեստում առկա են եղել անհրաժեշտ քանակի մաքրիչ և հիգիենիկ միջոցներ: Պահեստից ապրանքների շարժը կատարվում է պահանջագրերի միջոցով, և ապրանքները պահեստից ելքագրվում է պահանջագրերի հիման վրա՝ ըստ անհրաժեշտ քանակի:

Կազմակերպությունում հիգիենայի պարագաները տրվում են անհատական՝ յուրաքանչյուր երեխային առանձին: Ամեն ամսվա վերջին օրը, ըստ կարիքի և պահանջի, պահանջագրով պահեստից գուրս է գրվում մաքրիչ և հիգիենիկ պարագաներ, և ամսվա առաջին օրը տնտեսուհին դայակներին ապահովվում է անհրաժեշտ քանակի մաքրիչ և հիգիենիկ պարագաներով:

Կենտրոն նոր երեխա ընդունվելու դեպքում, ապահովվում են երեխային անհրաժեշտ հիգիենիկ պարագաներով և հագուստով: Այս մասին անհատական զրույցներում փաստել են նաև երեխաների անմիջական խնամք իրականացնող աշխատակիցները:

- Ձեռնարկել բավարար ջանքեր՝ հասնելու երեխաների, հատկապես տղաների,ծխախոտային արտադրանք, թմրամիջոցներ և (կամ) հոգեներգործուն նյութեր

օգտագործելուցհրաժարվելուն՝ ներգրավելով կախվածությունների հարցերով մասնագիտացած բժիշկների,հոգեբանների:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Կենտրոնում աշխատանքային խմբի կողմից զրույց է տարվել 13-15 տարեկան տղաների հետ, նրանց խոսքով՝ ծխախոտ փորձել են, բայց պարբերաբար չենօգտագործում: Թմրանյութի օգտագործման ներկայումս հայտնաբերված և շարունակական դեպքերչեն արձանագրվել: Կենտրոնի մասնագետներին ևս մեկ անգամ տրվել է ցուցում, որ յուրաքանչյուրն իր մասով նշված խնդրի հետ կապված իրականացնի կանխարգելիչ միջոցներ և ըստ անհրաժեշտության՝ համագործակցի իրավապահ կառույցների հետ:

- Հրատապ կարգով կազմակերպել Կենտրոնի տնօրենի մրցույթի անցկացումը՝երաշխավորելով մրցույթը հաղթահարած անձի պատկերացումների և մոտեցումներիհամապատասխանությունը մարդու իրավունքներին, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հետ աշխատանքի պետական քաղաքականությանը:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Ինչպես մնացյալ, այնպես էլ տվյալ պարագայում՝ ՊՈԱԿ-ների տնօրենների թափուր հաստիքների լրացման գործընթացը գտնվում է նախարարության մշտական ուշադրության կենտրոնում:

- Ուսումնասիրել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարմանժամանակահատվածում երեխաների և աշխատողների իրավունքների հնարավոր խախտումները,պարզել այդ ուղղությամբ ձեռնարկված գործողությունների համապատասխանությունը և, ըստանհրաժեշտության, կիրառել պատասխանատվության միջոցներ:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> – Աշխատանքային խմբի անդամներն առանձնազրույցներ են ունեցել և՛ Կենտրոնի տնօրենի, և՛ աշխատակիցների հետ, ապա նաև ամբողջ աշխատակազմի մասնակցությամբ: Հնչել են առաջարկներ և

դիտարկումներ. աշխատակազմի փոխգործելիության արդյունքում կտրվի համապատասխան ընթացք՝ գերակա համարելով երեխայի լավագույն շահը:

● Ուսումնասիրել նախարարության՝ Կենտրոնի նկատմամբ մշտադիտարկման ևգնահատման, վերահսկողության, մեթոդական աջակցության պատասխանատու պաշտոնատարանձանց, այդ թվում՝ քաղաքական պաշտոններ զբաղեցնողների գործողություններիհամարժեքությունը և, համապատասխանաբար, կիրառել պատասխանատվության միջոցներ:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Հարկ է նշել, որ մեթոդական աջակցության համար պատասխանատու ստորաբաժանումը բոլոր ստորաբաժանումների հետ մշատական հեռախոսակապի մեջ է, տնօրենների հետ հանդիպումներ են կազմակերպվում տարբեր ձևաչափով: Նշված կենտրոնին, մինչև ուսումնասիրության իրականացումը ևս, տրամադրվել է մի շարք ուղղորդումներ:

● Ուսումնասիրել մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնողկազմակերպության աշխատողի ազատման միջնորդություն ներկայացնելու տնօրենի ժամանակավորպաշտոնակատարի որոշումը, հիմնավորվածությունը, պարզելու՝ երեխաներին ծեծելու վերաբերյալստացված տեղեկության համապատասխանությունն իրականությանը, տնօրենի կողմից նկատված«վատ պահելու» դեպքից հետո երեխաների պաշտպանության ուղղությամբ իրականացված քայլերի համարժեքությունը, անհրաժեշտության դեպքում կիրառել պատասխանատվության միջոցներ և աջակցել իրավական գնահատական տալուն:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Ինչպես ցանակացած աշխատակցի, այնպես էլ Պահնորդական գործունեության իրականացումը կենտրոնի առաքելությանը համահունչ կազմակերպելու հարցը Տնօրենի Ժ/պ-ն քննարկել է ծառայությունը մատուցողի հետ. դիտարկվել է ծառայության մատուցման գործընթացում առավելագույնս երեխայակենտրոն աշխատանքի ապահովումը:

● Ձեռնարկել հրատապ միջոցներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող երեխաների՝խտրականությունից պաշտպանության իրավունքը, անցկացնել դեպքերի մանրամասն ուսումնասիրություն, անդրադառնալով նաև դեպքերի շարունակական բնույթին, դրանցարձագանքմանը, կիրառել պատասխանատվության միջոցներ և աջակցել իրավական գնահատականտալուն:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը - Ինչպես արդեն իսկ նշվեց՝_Ներկայացված մտահոգության առնչությամբ Աշխատանքային խմբի անդամները զրուցել են երեխաների հետ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, որոնք զրույցի ընթացքում հայտնել են մյուս սաների կողմից իրենց նկատմամբ բռնության բոլոր տեսակների բացակայության մասին:

Այնուամենայնիվ տեղեկացնում ենք նաև, որ բազմամասնագիտական խմբի անդամների կողմից, գնահատված կարիքի հիման, վրա տրամադրվում է աջակցություն, որի լավարկման ուղղությամբ աշխատանքային խմբի կողմից ՊՈԱԿ-ին տրվել են համապատասխան ցուցումներ, այդ թվում՝ երեխաների միջանձնային հարաբերություններում հնարավոր ռիսկերը կանխարգելելու նպատակով:

● Ուսումնասիրել երեխաների շրջանում միմյանց նկատմամբ շարունակականբռնությունների խորքային պատճառները և իրականացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբայինաշխատանքներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով մասնագետների:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը - Փաստարկված տվյալներ առկա չեն:

● Ուսումնասիրել Դիտորդական խմբի ստացած տեղեկության համապատասխանությունը պատշգամբից երեխաներից մեկին գցելու փորձի կամ ցանկության վերաբերյալ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը - Փաստարկված տվյալներ առկա չեն:

● Վերացնել երեխաների շրջանում քրեական ենթամշակույթին բնորոշ տարրերը, այդթվում՝ որոշ երեխաների՝ մյուսների նկատմամբ իշխանություն ունենալը, խնդիրների մասին բարձրաձայնելու դեպքում «գործ տվողի» պիտակավորումը, և ձևավորել խնդիրների ու անհանգստությունների մասին բարձրաձայնելը խրախուսող միջավայր ինչպես աշխատողների,այնպես էլ երեխաների մոտ:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Երեխաների ձայնը լսելի դարձնելու իրավունքի իրացման ուղղությամբ արդեն իսկ ներդրված միջոցների ընդլայնումը գտնվում է նախարարության շարունակական ուշադրության տիրույթում: բացի այդ, 2022 թվականին ՄԻՊ գրասենյակին ԱՍՀՆ-ն առաջարկել է հաստատություններում աշխատակազմերի և երեխաների համար իրականացնել վերապատրաստման դասընթաներ, որի արդյունքում ներդրվելու է երեխաների առողջական խնդիրներին համապատասխան միջոցներ՝ ուղղված վերջիններիս ձայնը լելի դարձնելու սահմանադրական իրավունքի իրացմանը:

● Ուսումնասիրել երկու երեխաներին հոգեբուժարան տեղափոխելու իրավական հիմքերը ևայդ աշխատանքների կազմակերպման ընթացքի համապատասխանությունն օրենսդրությանը:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Երեխաների հոսպիտալացումն իրականացվել է շտապօգնության միջոցով:

● Ապահովել հղի դեռահաս աղջկա անվտանգ մայրությունը, այդ թվում՝ հղիությանընթացքում ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման բարձրորակ ծառայություններիհասանալիությունը:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Ինչպես նշվել է նախորդիվ՝ համապատասխան մասնագիտացված կենտրոնը սկսել է ՊՈԱԿ-ի հետ համագործակցություն, և արդեն իսկ կայացել ենդեպքի շուրջ քննարկումներ, առաջնային միջոցների ձեռնարկում:

● Ուսումնասիրել հղի դեռահաս աղջկա վերաբերյալ նախկինում կայացված որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, այդ թվում՝ իր կարծիքը հաշվի առնելը, ծնողիհիրազեկվածությունը: Համապատասխանաբար ձեռնարկել նաև միջոցներ՝ ճշտելու ստացվածտեղեկությունները նախարարության կողմից հղիությունը չընդհատելու ցուցման վերաբերյալ՝անհրաժեշտության դեպքում կիրառելով պատասխանատվության միջոցներ, աջակցելով իրավականգնահատական տալուն:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Աշխատանքային խումբը առանձնազրույց է ունեցել զեկույցում նշված հղի աղջկա հետ, ով 16 տարեկան է. ՊՈԱԿ է տեղափոխվել հղի կարգավիճակով: Աղջկա հետ իրականացվել և շարունակվում են իրականացվել կարիքահեն միջոցառումներ.նախարարության կողմից տրվել են համապատասխան ցուցումներ՝ հաշվի առնելով դեպքի բարձր ռիսկայնությունը՝ ոլորտային համապատասխան կառույցների հետ համալիր միջոցառումների ձեռնարկման նպատակով:

● Դադարեցնել Կենտրոնում երեխաների նկատմամբ պատժիչ դաստիարակությանմեթոդների կիրառումը, կանխել պահնորդական ծառայությունը ոստիկանական ծառայությամբփոխարինելու տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի ցանկությունը:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Տնօրենի Ժ/պ-ն աշխատանքային խմբի հետ զրույցում հերքել է նման մտադրությունը:

● Վերացնել ծնողների հետ տեսակցության և հեռախոսային հաղորդակցության մտցվածնոր սահմանափակումները և հարգել նրանց անձնական կյանքի իրավունքը: Նոր գործելակարգինտալ իրավական գնահատական:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Տեսակցությունները ներկայումս իրականացվում են անխոչընդոտ, այնուամենայնիվ, տնօրենին այս հարցում ևս մեկ անգամ տրվել են համապատասխան ցուցումներ՝ ուղղված երեխա-ծնող հարաբերությունների առավել սերտ ապահովմանը: Տեսակցությունները փաստագրվում են նաև

գրանցամատյաններում, որտեղ նշվում է երեխայի, ծնողի, դեպքը վարող սոցիալական աշխատողի տվյալները:

● Ուսումնասիրել Դիտորդական խումբի այցի ժամանակ երեխաներից մեկի մորըսենյակում բանալիով փակելու տեղեկության համապատասխանությունը և ձեռնարկել դրանից բխողանհրաժեշտ գործողություններ:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ձևավորված Աշխատանքային խմբի դիտարկումը</u> - Հեռախոսազրույց է իրականացվել դիտորդական խմբի այցի ժամանակ հաստատություն այցելած ծնողի հետ: Վերջինս նշել է, որ մշտապես տեսակցում է երեխաներին և որևէ անգամ այդ գործընթացում խոչընդոտի չի բախվել: Ծնողը հերքել է նաև լուրն այն մասին, թե դիտորդական խմբի այցի ժամանակ սենյակի դուռը եղել է կողպված: